ՍՏ. ՊԱԼԱՍԱՆՅԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԵՎՈՐԴ ԽԵԴՈՅԱՆ

Հայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմության դեռևս չլուծված հարցերից մեկը ականավոր պատմաբան, լեզվաբան, գրականության տեսաբան, փիլիսոփա, հրապարակախոս և մանկավարժ Ստ. Պալասանյանի (1837—1889) քաղաքական-գաղափարական դիրքորոշման հարցն է։ Նրա գործունեության և թողած գրական ժառանգության ուսումնասիրությամբ զբաղվել են շատերը, բայց գնահատել են տարբեր կերպ։ Տարակարծությունը մեծ է հատկապես նրա սոցիալ-քաղաքական հայացքների գնահատման հարցում։ Այսպես, սովետահայ անվանի պատմաբան Ա. Հովհաննիսյանը Ստ. Պալասանյանին բնութագրում է որպես ազգային-պահպանողական գործչի[1], Հ. Գաբրիելյանը՝ որպես հայ առաջադեմ բուրժուազիայի գաղափարախոսի[2], Ս. Թովմասյանը՝ բուրժուական լիբերալի[3] և այլն։ Միայն բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, որը եղել է Ստ. Պալասանյանի ընկերը և համախոհը, նրան բնութագրում է որպես աշխատավոր ժողովրդի գաղափարախոսի և Խ. Աբովյանի հետևորդի[4]։ Թե իրականում հասարակական-քաղաքական ի՞նչ ուղղության է հարել Ստ. Պալասանյանը և թե ո՞րն է եղել նրա գաղափարական դավանանքը կարելի է ճիշտ որոշել Ստ. Պալասանյանի սոցիալ-քաղաքական ըմբռնումներով, որոնց քննությանը նվիրված է ներկա հոդվածը։

1868 թ. Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» թերթը տպագրեց իր աշխատակից Ստ. Պալասանյանին ուղղված մի նամակ, որտեղ նամակագիրը խնդրում էր բացատրել, թե ինչո՞ւ կյանքում սոցիալական չարիքներ կան և ի՞նչն է պատճառը, որ հասարակության մի մասն աշխատում է վնասել մյուս մասին, «աշխատում է բռնանալ» մյուս մասի վրա։ Իր պատասխան նամակում Ստ. Պալասանյանը գրում է, որ չնայած «ծանր է» այդ կնճռոտ հարցերի պարզաբանումը, բայց և այնպես, հույս դնելով իր արտահայտած գաղափարների նկատմամբ «ներողամտություն ցուցաբերելու» վրա, կաշխատի մի քանի նամակներով պատասխանել նամակագրի հարցերին։

Ի հակադրություն «մարդը մարդուն գայլ է» սկզբունքի, որը հակամարտ հասարակարգերում տիրող իրավիճակի արդարացումն է, Ստ. Պալասանյանն այդ նամակում ելնում է այն մեկնակետից, թե «մարդը մար-

---

1 Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, Երևան, 1955, էջ 244, 278, գիրք 2, 1956, էջ 91 և հետո։

2 Հ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 3, Երևան, 1959, էջ 172, 196։

3 Ս. Ս. Թովմասյան, Ստ. Պալասանյանի գեղագիտական հայացքները, Երևան, 1959, էջ 27, 122։

4 Գրականության և արվեստի թանգարան, Մ. Բարխուդարյանի ֆոնդ, № 614։

դուն եղբայր է և բարեկամ»։ Դրա ապացույցը նա տեսնում է մարդկանց հեռավոր անցյալում, երբ հասարակությունը չէր բաժանվել հակամարտ դասակարգերի և երբ մարդիկ փոխադարձաբար օգնում ու պաշտպանում էին միմյանց։ Ըստ Ստ. Պալասանյանի՝ հենց դա է մարդկանց կոչումը. մարդիկ, դրում է նա, «պարտական էին միմյանց սիրելու, հարգելու, օգնելու, պաշտպանելու, ինչպես եղբայրական սիրով կապված և միավորված արարածներ»[5]։ Իսկ չարիք գործելը, ուրիշին վնասելը, ճնշելը ոչ միայն չեն բխում մարդու էությունից, այլև «մարդուս բնությանը բոլորովին անվայելուչ են»։ Այդ դեպքում ինչո՞վ բացատրել իրական կյանքում գոյություն ունեցող չարիքների, ճնշման ու շահագործման փաստը, ո՞րն է դրա պատճառը։ «Սորա պատճառը հենց մենք իրանք մարդիկս ենք,— պատասխանում է նա,— որոնք մոռացել ենք բնության օրենքները, որոնք մեռցրել ենք մեր մեջ մեր բնական դատավորի՝ խղճմտանքի ազդեցությունը»։ Բնության օրենքների դեմ մեղանչելով մարդիկ ստորացան, «դարձան միմյանց թշնամի, հարստահարող, ոմանք ասացին, ինչպես հին և միջին դարերում. մենք պետք է իշխենք, իսկ դուք հնազանդիք... դուք պետք է աշխատեք և մենք վայելենք, դուք պետք է չարչարվիք, իսկ մենք բավականության մեջ հղփանանք, որովհետև մենք ազնիվ ծագումն ունենք, մենք ձեզնից չենք»[6]։ Եվ այդպես հասարակության անդամները, որ առաջ եղբայրաբար օգնում էին միմյանց, դարձան թշնամիներ. հասարակական կյանքի նորմալ, «բնական վիճակը» խախտվեց և «միևնույն ազգի կամ հասարակության անդամները միմյանցից օտարացան, մեկը սկսավ մյուսին զրկել, մեկը սկսավ մյուսի վրա բռնանալ ու շատ տեղ մարդը դարձավ մարդու սեպհականություն, առուտուրի առարկա, բավականության գործիք, մի խոսքով ստրուկ...»[7]։

Ֆրանսիական ուտոպիական սոցիալիզմի ներկայացուցիչների, մասնավորապես Ա. Սեն-Սիմոնի գաղափարական ազդեցությամբ Ստ. Պալասանյանն աշխատում էր ապացուցել, որ հասարակական կյանքի նորմալ, «բնական վիճակը» սոցիալական չարիքների, դասակարգային հակամարտության, ճնշման ու շահագործման բացակայության և մարդկանց փոխադարձ օգնության հարաբերությունների վիճակն է։ Ահա թե ինչու էր նա դիմում նախնադարյան-համայնական հասարակարգի օրինակին, որը նրա համար մի կռվան էր հասարակության անդամների տնտեսական հավասարությունը և փոխադարձ օգնությունը հասարակական կյանքի միակ նորմալ վիճակ հայտարարելու, ուտոպիական սոցիալիզմի գաղափարներ պրոպագանդելու համար։ Շատ արժեքավոր է նաև ճնշման ու շահագործման՝ Ստ. Պալասանյանի մերկացնող քննադատությունը։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե այդ քննադատությունն ուղղված է միայն ստրկության և ֆեոդալիզմի դեմ։ Սովորաբար, լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսները ևս խիստ քննադատում են ստրկությունն ու ֆեոդալիզմը, դրանք համարում են հակաբնական երևույթներ, որպեսզի արդարացնեն ու բնական հայտարարեն անմիջական արտադրողի անձնական ազատության վարագույրով վարպետորեն սքողված կապիտալիստական ճնշումն ու շահագործումը։

---

5 «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1868, № 16։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում։

Հայտնի է, որ իր ժամանակին հայ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը պատռելով անձնական ազատության այդ վարագույրը, հարցն այսպես էր դնում, թե «ազա՞տ եմ ես, միմիայն օրենքով, քաղաքականապես ազատ կոչվելով, ազա՞տ եմ ես, քանի որ նյութական կարոտությունը ստիպում է ինձ, կամա ակամա, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայությամբ հաց ճարել ընտանիքի համար»[8]։

Ստ. Պալասանյանը ևս հարցը նույն կերպ է դնում. անմիջական արտադրողի անձնական ազատությամբ արդյոք վերանո՞ւմ է սոցիալական ճնշումն ու շահագործումը և պատասխանում՝ ո՛չ։ Նա ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ «մեկը մյուսի անձնական ազատությունը բռնալ չաշխատեց, միայն նորա աշխատանքի, նորա վաստակի վրա բռնացավ։ Այս ստրկությունից էլ ավելի թշվառություն եղավ մարդոց համար, որովհետև... ազատ, բայց աղքատը, ամենից թողած, չքավորությունից հալածված և ստիպված պետք է լիներ շատ անգամ փողոցի մի անկյունում մեռնել»[9]։

Ինչպես տեսնում ենք, Ստ. Պալասանյանի մերկացնող քննադատությունն ուղղված է ոչ միայն ստրկության ու ճորտության դեմ, այլև վարձու ստրկության դեմ, որը նա ավելի մեծ թշվառություն է համարում մարդկանց համար։ Ուստի, ոչ մի կերպ չի կարելի համաձայնվել Հ. Գաբրիելյանի այն պնդման հետ, թե Ստ. Պալասանյանը «մասնավոր սեփականատիրական հարաբերությունների կողմնակից է» և թե իբր նա չի հասկացել, «որ բուրժուական հասարակության մեջ մարդը, ըստ էության, նորից շարունակում է ստրկական վիճակի մեջ մնալ և անասելի շահագործման ենթարկվել»[10]։ Իրականում Ստ. Պալասանյանի քննվող նամակ-հոդվածում ուտոպիական սոցիալիզմի տեսանկյունից քննադատվում է ինչպես մասնավոր սեփականատիրությունը, այնպես էլ ամեն մի ճնշում ու շահագործում, այդ թվում նաև կապիտալիստականը։

Ահա թե ինչու Ստ. Պալասանյանը նախապես խնդրում էր ներողամտություն ցուցաբերել իր արտահայտած գաղափարների նկատմամբ։ Սակայն «Ա» նամակից հետո այլևս նամակներ չտպագրվեցին։ Թե ինչպիսի՞ն էր լինելու մյուս նամակների բովանդակությունը, դժբախտաբար, մեզ հայտնի չէ։ Դատելով առաջին նամակի բովանդակությունից կարելի է ենթադրել, որ նրանցում Ստ. Պալասանյանը քննելու էր (կամ մտադիր էր քննել) սոցիալական ճնշումից ու շահագործումից ազատագրվելու, հայ իրականությունը վերակառուցելու ուղիների և միջոցների հարցը։ Այդ է վկայում այն փաստը, որ Ստ. Պալասանյանը հետագայում ամեն պատեհ առիթով շոշափում էր (լեգալ մամուլի ընձեռած հնարավորությունների սահմաններում) սոցիալական անհավասարության վերացման և հայ իրականության վերակառուցման ուղիների ու միջոցների հարցը։

Նոր։ զարգացող հայ բուրժուազիայի գաղափարախոսները գտնում էին, որ Հայաստանի զարգացումը պետք է ընթանա կապիտալիստական ուղիով և առաջ էին քաշում հայ իրականության՝ եվրոպական քաղաքակրթության ոգով աստիճանաբար վերակառուցելու պահանջը։ Սակայն, եթե Հայաստանը

---

8 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940, էջ 52։

9 «Մեղու Հայաստանի», 1868, № 16։

10 Հ. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 230։

նոր էր ոտք դնում կապիտալիստական զարդացման ուղին, այլ Արևմուտքում կապիտալիզմն արդեն լրիվ դրսևորել էր իրեն սոցիալական չարիքների և անարդարությունների առումով։ Դրա համար էլ հայ բուրժուազիայի որոշ հեռատես գաղափարախոսներ աշխատում էին խուսափել եվրոպական քաղաքակրթության որոշ այլանդակություններից, խուսափել կապիտալիստական ճնշման ու շահագործման ծայրահեղություններից։ Այդուհանդերձ, նրանք բոլորն էլ գովերգում էին եվրոպական քաղաքակրթության «բարեմասնությունները», հատկապես, բուրժուական քաղաքական ազատությունները, բուրժուական դեմոկրատիան։

Ի հակադրություն բուրժուազիայի գաղափարախոսների, Մ. Նալբանդյանը հայ իրականության վերակառուցման և նրա հետագա զարգացման ուղիների հարցին մոտենում էր սոցիալական անհավասարության վերացման, տնտեսական խնդրի լուծման տեսանկյունից՝ գտնելով, որ բուրժուական քաղաքակրթությունը չի լուծել տնտեսական խնդիրը, որ քաղաքակիրթ Եվրոպայում էլ կյանքի առանցքը՝ այդ խնդրի լուծման համար մղվող պայքարն է։ Նա արդարացնում էր պրոլետարիատի պայքարը և մարգարեաբար կանխագուշակում «սոսկալի փոթորիկների» միջոցով տնտեսական խնդրի լուծման անխուսափելիությունը[11]։

Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությամբ և նրա օրինակով Ստ. Պալասանյանը նույնպես հայ իրականության վերակառուցման և նրա հետագա զարգացման ուղիների հարցը կապում է սոցիալական անհավասարության վերացման, տնտեսական խնդրի լուծման հետ՝ հայտարարելով, թե եվրոպական «քաղաքակիրթ ընկերությունների մեջ, ուր տնտեսական անհավասարությունը թշնամություն է առաջացնում զանազան դասերի մեջ, ուր պետության կարիքները մեծամեծ հարկեր են պահանջում, ուր մարդկանց հարաբերությունները բարդված են, դժվար բան է ազատությունն ու կարգը միմյանց հետ հաշտեցնելը»[12]։ Նա լավ էր ըմբռնում, որ դասակարգային հակամարտության վրա խարսխված բուրժուական հասարակարգում չի կարող լինել իսկական ազատություն, որ գովաբանվող բուրժուական քաղաքական ազատությունները կեղծիք են։ «Եվրոպական ժողովուրդները երեվակայում են,— գրում է Ստ. Պալասանյանը,— թե հասարակապետությունը և ազատությունը հիմնելու համար՝ բավական է հրատարակել առաջինը և օրենքներ սահմանել երկրորդի համար։ Խորտակում են մի կառավարություն, խմբագրում են մի նոր սահմանադրություն, ընդունում են հասարակապետական ձևեր, փոխում են փողոցների անունները, հավասարության նշանաբաններ դրոշմվում են հիշատակարանների վրա, և հետո, եթե ընդդիմություններ են երևում, եթե երկպառակություններ են ծագում, եթե վերջապես նոր շինությունը սպառնում է փուլ գալ, ամեն կողմից աղաղակում են դավաճանությո՜ւն, և ամբաստանություններին վերջ չկա»[13]։ Որքան համահնչուն են այս խոսքերը Մ. Նալբանդյանի խոսքերին։ Ուշագրավ է նաև այն, որ Մ. Նալբանդյանի նման Ստ. Պալասանյանն էլ իր համակրանքն է

11 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ. 56, 81։
12 «Փորձ», Թիֆլիս, 1877, № 4, էջ 134։
13 Նույն տեղում։

արտահայտում կապիտալիզմի դեմ ուղղված «ընդդիմություններին» և արդարացնում դրանք։

Կարելի է կապիտալիզմի արդյունավետ քննադատության բազմաթիվ օրինակներ բերել, երբ Ստ. Պալասանյանը վարպետությամբ մերկացնում է կապիտալիզմի անբուժելի խոցերը, բացահայտում նրա հակասությունները։ Այդ տեսակետից շատ արժեքավոր է ֆրանսիացի ականավոր կին զբոսող Ժորժ Սանդի դործերի հայերեն թարգմանության առթիվ նրա դրած հոդվածը։ Նրանում Ստ. Պալասանյանը բարձր է գնահատում Ժորժ Սանդին՝ կապիտալիստական հասարակարգում տիրապետող սեփականատիրական ոգու և հարստացման մոլուցքի խիստ քննադատության համար, նշելով, որ Ժորժ Սանդը կարողացավ «հմուտ բժշկի պես շոշափել հասարակության բազկերակը և ուշադրությամբ ականջ դնել նորա սրտի անկանոն բաբախմանը։ Ընդհանուր ապականության ազդեցությունը կատարելապես ըմբռնելու և ուրիշին բացատրելու համար՝ պետք էր քրքրել ու գտնել նորա բուն պատճառները»[14]։ Իսկ Ժորժ Սանդը, որ գտնվում էր Ա. Սեն-Սիմոնի և նրա հետևորդների ուտոպիական սոցիալիզմի գաղափարների ազդեցության տակ, կապիտալիզմի հակասությունների, սոցիալական չարիքների ու անարդարությունների հիմնական պատճառը համարում էր մասնավոր-կապիտալիստական սեփականությունը։ Կապիտալիզմի արդյունավետ քննադատության և հասարակ ժողովրդի շահերի պաշտպանության համար նա մեծ ժողովրդականություն էր վայելում ոչ միայն Ֆրանսիայում և ողջ Եվրոպայում, այլև Ռուսաստանում։ Հայտնի է, որ ռուս հեղափոխական դեմոկրատներ Վ. Բելինսկին և Ն. Չերնիշևսկին շատ բարձր են գնահատել նրա գործերի քննադատական ոգին։

Ստ. Պալասանյանը նույնպես դրվատանքի խոսքեր չի խնայում Ժորժ Սանդի հասցեին ամենից առաջ հենց այդ քննադատական ոգու համար, ինչպես ինքն էր արտահայտվում, այն բանի համար, որ Ժորժ Սանդը ճիշտ էր ըմբռնել բուրժուական հասարակարգում տիրող «ընդհանուր ապականությունը» և մերկացրել էր նրա անբուժելի խոցերը։ «Նրան իրավամբ անվանեցին հասարակական ախտերի բանաստեղծ և այդ ախտերի ճիշտ նկարագրությամբը ցույց տվեց նոցա զարհուրելի ու զզվելի երևույթները»[15]։ Եվ Ստ. Պալասանյանը խիստ դատապարտում էր բուրժուական այն գրչակներին, որոնք կատաղի պայքար էին սկսել Ժորժ Սանդի դեմ միայն նրա համար, որ վերջինս «այրական անվեհերությամբ խաբեության քողը պատռել և մերկացրել էր հասարակական կյանքի փտած ու նեխած վերքերը»[16]։

Պարզ է, որ Ստ. Պալասանյանի վերաբերմունքը կապիտալիզմի նկատմամբ բացասական է. կապիտալիզմը այն հասարակարգը չէ, որը կհամապատասխաներ «բնության օրենքին», այն «հակաբնական քաղաքական կազմակերպություն է», սոցիալական չարիքների և անարդարության հասարակարգ։ Իր քննադատական հոդվածներից մեկում նշելով, որ կապիտալիզմի օրոք «մարդկային ընկերության մեջ այլ և այլ անբնական երևույթներ կազմվել, այլ և այլ ախտեր են բուն դրել», Ստ. Պալասանյանը ցույց էր

14 Նույն տեղում, № 3, էջ 297։
15 Նույն տեղում։
16 Նույն տեղում, էջ 298։

տալիս բուրժուական «ընկերական հարաբերությունների բոլոր անբնականությունն ու վնասակարությունը», բարձր դասերի զեղծմունքները և «ստորինների անմխիթար դրությունը, կանանց, մշակ և երկրագործ դասերի տընտեսական ու բարոյական թշվառությունը»[17]։

Եթե կապիտալիզմը հակաբնական հասարակարգ է, նշանակում է այն ենթակա է փոխարինման նոր, արդարացի հասարակարգով, որը կհամապատասխաներ մարդկանց կոչմանը և «բնության օրենքին»։ Բայց կոնկրետ ինչպիսի՞ հասարակարգով։ Ստ. Պալասանյանի իդեալը այնպիսի հասարակարգն էր, ուր չէին լինի սոցիալական չարիքներ, ճնշում և շահագործում, ուր իրականացված կլիներ հասարակության անդամների տնտեսական հավասարությունը, համերաշխությունն ու միասնությունը։ Ապագա արդարացի հասարակությունը նա պատկերացնում է համերաշխ գերդաստանի ձևով. «Ինչպես մի գերդաստանի մեջ ամեն անդամ միևնույն շահն ունի աչքի առաջ, նույնը պետք է լիներ և հասարակության և ազգերի մեջ... Գերդաստանի մեջ յուրաքանչյուր անդամ յուր ընդունակությանց, յուր կարողության չափ ծառայում է ու աշխատում ամենքի շահի համար... ինչ որ վաստակվում է, ամենքը հավասարապես վայելում են, ամեն բան եղբայրաբար կատարվում է»[18]։ Գերդաստանի մեջ «մեծը, թե փոքրը, զորեղը, թե տկարը, առողջը, թե հիվանդը, տնաշեն տանտիկինը, թե քնքուշ օրիորդը», բոլորն աշխատում են ըստ իրենց ընդունակությունների և «բոլորն էլ հավասար վայելում են հասարակաց բարիքը»[19]։

Ակնհայտ է, որ Ստ. Պալասանյանը ապագա արդարացի հասարակության իր ըմբռնումով հարում էր ուտոպիական սոցիալիզմի գաղափարներին։ Ուտոպիստ սոցիալիստների օրինակով նա սպառողական և հավասարարական մոտեցում էր ցուցաբերում ապագա հասարակության նկատմամբ, գտնելով, որ դլխավորը և հիմնականը արդարացի հասարակարգում հավասարության իրականացումն է սպառման բնագավառում, երբ յուրաքանչյուրն աշխատում է ըստ իր ընդունակությունների, բայց սպառում է բոլորին հավասար։

Ուտոպիական սոցիալիզմի գաղափարները, մարդկանց հավասարության սկզբունքի կրքոտ պաշտպանությունը բխում են Ստ. Պալասանյանի դեմոկրատիզմից։ Այդ գաղափարների մեջ իրենց արտահայտությունն են գտել աշխատավոր զանգվածների դարավոր իղձերը և ձգտումները իդեալական, երջանիկ կյանքի մասին։ Որպես դեմոկրատ մտածող՝ Ստ. Պալասանյանը երազում է իրականացած տեսնել մարդկանց հավասարությունը։ Նա հավասարության ջատագով է. «Բոլոր մարդիկ, ասում ենք ամենայն իրավամբ,— գրում է Ստ. Պալասանյանը,— ամենամեծ իշխանից սկսած մինչև ետին գեղջուկը, ազնվականից մինչև վերջին ռամիկը, լուսավորյալ և տգետ, սպիտակամորթ և սևամորթ, միևնույն մտավոր և բարոյական ձիրքերն ունեն, տարբերությունը առաջ է գալիս միայն ընդունակությունների ավել կամ պակաս մշակելուց կամ չմշակելուց, բայց և այս անհարթությունը ժամանակով անհայտանալու է»[20]։ Մարդկանց, ազգերի, ռասաների հավասարու-

---

17 Նույն տեղում, 1879, էջ 131։

18 «Մեղու Հայաստանի», 1868, № 16 (ընդգծումը մերն է.—Գ. Խ.)։

19 Նույն տեղում։

20 «Փորձ», 1877/78, № 1, էջ 136։

թյան սկզբունքը և հավատն այդ սկզբունքի հաղթանակի նկատմամբ այն բնորոշ գիծն է, որ կարմիր թելի նման անցնում է Ստ. Պալասանյանի աշխատությունների միջով և ցույց տալիս նրա հայացքների դեմոկրատական ուղղվածությունը։ Դա, որոշ վերապահումով, ընդունում է նաև Ստ. Պալասանյանին լիբերալ մտածող որակող Ս. Թովմասյանը. «Մագումից, սոցիալական դիրքից ու ռասայական պատկանելիությունից անկախ՝ բոլոր մարդկանց հավասարության այս պաթոսն այն դեմոկրատական գծի արտահայտությունն է, որ երբեմն շատ ցայտունորեն երևան է գալիս Ստ. Պալասանյանի աշխարհայացքում»[21]։

Իսկ ինչպես է իրականացվելու այդ հավասարությունը, ինչ ճանապարհով է վերակառուցվելու հասարակական կյանքը։ Սա մի առանցքային հարց էր, որն ուներ ոչ միայն տեսական, այլև գործնական խոշոր նշանակություն, որովհետև անմիջականորեն շոշափում էր հայ իրականության վերակառուցման հրատապ խնդիրը։

Ստ. Պալասանյանը ոչ միայն ուտոպիական սոցիալիզմի գաղափարների ջերմ պաշտպան էր, այլև միշտ մեծ գովեստով էր արտահայտվում սոցիալական հեղափոխության մասին։ Սոցիալական հեղափոխության և ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ նրա դրական վերաբերմունքն անվերապահ է։ Այս տեսակետից համոզիչ չի թվում Ս. Թովմասյանի այն կարծիքը, թե «սոցիոլոգիական կատակլիզմների» ծայրահեղությունները «վախեցնում են լիբերալ» Ստ. Պալասանյանին, թե «խիստ բնորոշ է այն երկդիմի գնահատականը, որ նա տալիս է ֆրանսիական ռևոլյուցիային», թե հեղափոխության գնահատման հարցում նրա մոտ «լիբերալը հաղթահարում է դեմոկրատին»[22], որովհետև, դրական արտահայտվելով ֆրանսիական հեղափոխության մասին, Ստ. Պալասանյանը միաժամանակ դժգոհում է նրանից, որ վերջինս «ծնունդ է տվել» մի անտանելի դիկտատուրայի։ Իսկ թե ո՞րն է այդ դիկտատուրան, որից դժգոհ է Ստ. Պալասանյանը, Ս. Թովմասյանը չի պարզաբանում։ Բայց ահա թե ինչ է գրում Ստ. Պալասանյանը 1789 թ. ֆրանսիական հեղափոխության մասին. «Ֆրանսիական հեղափոխությունը, այս մեծ ու վսեմ փորձը մարդկանց մեծագույն մասը փոքրագույն մասի դարևոր ճնշողությունից ու հարստահարությունից ազատելու, մի նոր դարագլուխ բաց արավ մարդկության համար, հուսո ու երջանկության դարագլուխ. բայց միևնույն ժամանակ նա ծնունդ տվավ մի անտանելի դիկտատորության, որ թեև կարճատև կյանք ունեցավ, այնուամենայնիվ մեծապես ծանրացավ ազգերի վրա։ Նապոլեոն Ա յուր աշխարհակալական ձգտումներով եվրոպական ժողովուրդների ազգայնության իրավունքը վիրավորեց»[23]։

Ստ. Պալասանյանը դժգոհում էր, որ ֆրանսիական հեղափոխությունը միայն փորձել է մարդկանց մեծագույն մասը փոքրագույն մասի ճնշումից ու հարստահարումից ազատել, բայց չի իրականացրել։ Եվ դա հասկանալի է. քննադատական ուտոպիական սոցիալիզմի գաղափարներին հարող Ստ. Պալասանյանը պետք է, որ դժգոհ լիներ բուրժուական հեղափոխության ար-

21 Ս. Ս. Թովմասյան, նշվ. աշխ., էջ 27։
22 Նույն տեղում, էջ 22։
23 «Փորձ», 1879, № 2, էջ 130։

դյունքից, այսինքն՝ կապիտալի տիրապետության հաստատումից։ Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե «ամեն մի ռևոլյուցիա նա համարում էր ծանը փորձանք մարդկության համար»[24]։ Այդ են ապացուցում նաև Ստ. Պալասանյանի արտահայտած մյուս մտքերը բուրժուական հեղափոխությունների մասին։

Իր հոդվածներից մեկում, անդրադառնալով սենտիմենտալիզմի և հեղափոխական ռոմանտիզմի ծագման պատճառներին, Ստ. Պալասանյանը գրում է, թե ժողովուրդը բուրժուական հեղափոխությունների հետևանքով հաստատված կապիտալիստական կարգի մեջ «բավարարություն չգտնելով», իր հայացքը դարձրեց դեպի անցյալը՝ «հույս ունենալով այնտեղ գտնել մի իդեալ», որով հնարավոր լիներ մարդկանց «վհատած սրտերը սփոփել»։ «ԺԸ-րդ դարու եվրոպական ընկերության ցավալի վիճակը և նույն ժամանակ տեղի ունեցած քաղաքական հեղափոխությունները ծանր տպավորություն գործեցին ժամանակակիցների հոգու վրա։ Ամենալուսավորյալ ու հառաջադեմ անձինքը սկսան կասկածել այն քաղաքակրթության վրա, որի շնորհիվ այնքան զեղծմունքներ էին մտել մարդկանց մեջ և կարծել թե բուն երջանկությունը միայն նախնական պարզության մեջ կարելի է գտնել...»[25]։

Ինչպես տեսնում ենք, Ստ. Պալասանյանը դարձյալ դժգոհ է բուրժուական հեղափոխության արդյունքից և նշում է, որ այդ հեղափոխության հետ մեծ հույսեր կապած «ամենալուսավորյալ ու հառաջադեմ անձինք» (խոսքը Ժ.-Ժ. Ռուսսոյի, Ջ. Բայրոնի, Ի. Գյոթեի, Ի. Շիլլերի և Վ. Հյուգոյի մասին է) նրա իրականացումից հետո հիասթափվեցին, որովհետև այդ հեղափոխությունների հետևանքով հաստատված նոր քաղաքակրթությունը՝ կապիտալիստական կարգը, իր հետ նոր չարիքներ բերեց։ Իրենց սպասելիքներից հուսախաբված՝ նրանք երեսները շրջեցին դեպի վաղ անցյալի պարզունակ կյանքը։ Եվ դրանում նա իրավացի էր։ «Ընդհանուրը և բնորոշը ռոմանտիկական ամբողջ հոսանքի համար եղել է հենց այն,— գրում է Ա. Լունաչարսկին,— որ այդ գրականությունն արտացոլել է ֆրանսիական հեղափոխության և ազատության, հավասարության ու եղբայրության իրականացման հույսերի խորտակման դարաշրջանը»[26]։

Ստ. Պալասանյանը դժգոհ էր նաև, որ ֆրանսիական հեղափոխությունը «ծնունդ էր տվել» նապոլեոնյան դիկտատուրային, որ Նապոլեոնը ստրկացրել էր եվրոպական շատ ժողովուրդների։ Եվ դրանում նույնպես նա իրավացի էր։ Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը բացասաբար է արտահայտվել նապոլեոնյան կայսրության մասին ամենից առաջ այն բանի համար, որ Նապոլեոնը հիմնել էր «ֆրանսիական կայսրությունը՝ ստրկացնելով Եվրոպայի վաղուց կազմավորված, խոշոր, կենսունակ ամբողջ մի շարք ազգային պետություններ»[27]։

Մեր կարծիքով, ֆրանսիական հեղափոխության պատմական դերի գնահատման մեջ, ինչպես նաև բուրժուական հեղափոխությունների մասին Ստ. Պալասանյանի արտահայտած վերոհիշյալ մտքերում ցայտուն կերպով երևում է ոչ թե պահպանողականի կամ լիբերալի, այլ դե-

---

24 Ս. Ս. Թովմասյան, նշվ. աշխ., էջ 117։

25 «Փորձ», 1879, № 2, էջ 130։

26 А. В. Луначарский, Собрание сочинений, т. 4, М., 1964, էջ 272։

27 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 415։

մոկրատի և սոցիալիստի ոգին։ Ընդհանրապես, Ստ. Պալասանյանի թողած հարուստ գրական ժառանգության մեջ անհնար է ցույց տալ սոցիալական հեղափոխությունը և ազգային-ազատագրական պայքարն ուղղակի կամ անուղղակի դատապարտող որևէ միտք։ Այնինչ անժխտելի փաստ է, որ նա բազմիցս գովեստով է արտահայտվել սոցիալական հեղափոխության մասին։ Այս առումով, վերը բերված փաստերից բացի, կարելի է վկայակոչել Ստ. Պալասանյանի «Հունաստանի անկախությունը»[28] և «Հունգարացոց ազգային բանաստեղծությունը 1848—1849-ի պատերազմի ժամանակ»[29] ծավալուն հոդվածները։ «Հունաստանի անկախությունը» հոդվածում Ստ. Պալասանյանը, քաջալերելով ճնշված ժողովուրդների անկախության համար մղած պայքարը, նշում է. «Ֆրանսիական հեղափոխության մեծ հրդեհը հարկավոր էր, որ այս թմրած ժողովուրդների մեջ շարժողություն ձգեր»[30]։ Նա միանգամայն ճիշտ է նշում ֆրանսիական հեղափոխության բարերար ազդեցությունը ազգային-ազատագրական պայքարի վերելքի վրա և ճիշտ է ըմբռնում, որ ազատության ու անկախության գաղափարի բողբոջները «ազատ կերպով աճեցան միայն այն ժամանակ, երբ ֆրանսիական հեղափոխության թարմ օդը ավելի հաստատուն սնունդ տվեց այդ բողբոջներին»[31]։

Սոցիալական հեղափոխության գովերգման պաթոսն ավելի ցայտուն է դրսևորվել «Հունգարացոց ազգային բանաստեղծությունը 1848—1849-ի պատերազմի ժամանակ» հոդվածում, որտեղ Ստ. Պալասանյանը հունգարական հեղափոխությունը որակում է որպես անկախության ու ազատության համար մղված «հերոսական պատերազմ», դարի ամենանշանավոր իրադարձություն, իսկ հունգարական պաուլամենտը՝ «Եվրոպայի ամենանշանավոր ամբիոնը»։ Ըստ որում, հիացմունքով խոսելով հունգար ժողովրդի հերոսության մասին, դեմոկրատ Ստ. Պալասանյանը հատկապես նշում է հասարակ ժողովրդի որոշիչ դերը հեղափոխության հաղթանակի մեջ, չքավոր, աշխատավորական զանգվածների ցուցաբերած վճռականությունն ու անձնուրացությունը, ասելով՝ թե «նոցանից շատը ոչինչ չունեին կորցնելու. նոքա ուրախությամբ երգում էին իրենց անհոգ ազատությունը, երբեմն հեգնական խոսքեր արձակելով իրանց հարուստ ընկերների դեմ»[32], որոնք անվճռական էին, որովհետև վախենում էին կորցնել իրենց հարստությունը։ Նա արտակարգ ոգևորությամբ է գովերգում հեղափոխությունն ու ազատությունը։ Եթե դուք հարցնեք հեղափոխության զինվորին, ասում է Ստ. Պալասանյանը, «թե ո՞րն է այն գերագույն բարիքը, որի համար նա պատրաստ է յուր և ուրիշների արյունը թափել, նա կպատասխանե ձեզ. Ազատությո՛ւնը... Դա մի արյունագույն վարդ է, որ ծաղկում է պատերազմական դաշտերի վրա... Ազատությունը երկնային ծաղիկ է, որ պատկանում է ազգերին»։ Ճշմարիտ է, որ նա իսկույն վրա է բերում. «Ի՞նչ գործ ունին նորա հետ թագավորներն ու կայսրները»[33]։ Ապա՝ «... անկախության համար տված պատերազմի ժամանակ ստեղծված երգերի մեջ չես պատահում թագավորություն բառին, իսկ

28 «Փորձ», 1877/78, № 2։
29 «Արձագանք», Թիֆլիս, 1892, № 17, 18, 19։
30 «Փորձ», 1877/78, № 2, էջ 166։
31 Նույն տեղում, էջ 185, 189։
32 «Արձագանք», 1892, № 19։
33 «Արձագանք», 1892, № 18։

եթե պատահում ես, անշուշտ նորանից առաջ կամ հետո մի անեծք է լինում...»[34]։

Ստ. Պալասանյանի սոցիալ-քաղաքական դիրքորոշման ճիշտ բնութագրման առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այն, որ քննվող հոդվածում նա, խստորեն դատապարտելով հունգարական հեղափոխությունն արյան մեջ խեղդող ավստրիական ու ռուսական կառավարություններին և գովերգելով խիզախ հեղափոխականներին ու նրանց օգնության հասած արտասահմանյան, մասնավորապես, ֆրանսիացի և լեհ կամավորներին, միաժամանակ քննադատում է հունգարական կառավարությանն այն բանի համար, որ վերջինս՝ չնայած պայքարում էր ավստրիական լծից ազատագրվելու և անկախություն ձեռք բերելու համար, բայց և այնպես ինքը չցանկացավ ազատություն և անկախություն շնորհել հունգարացիների ազգային ճնշման տակ գտնվող չեխերին և խորվաթներին։ Ստ. Պալասանյանը դա համարում է հունգարական հեղափոխության պարտության լուրջ պատճառներից մեկը՝ գտնելով, որ «ինքը Հունգարիան մասամբ յուր սեպհական կործանման համար է աշխատել»[35]։

Հայտնի չէ, արդյոք Ստ. Պալասանյանը ծանոթ եղել է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններին, բայց փաստ է, որ նա վերոհիշյալ հոդվածում, ըստ էության, անց է կացնում Կ. Մարքսի այն հայտնի միտքը, թե ոչ մի ժողովուրդ չի կարող ազատ լինել, եթե ինքը ճնշում է ուրիշին։

Եզրակացությունը պարզ է. սոցիալական հեղափոխությունը և ազգային-ազատագրական պայքարը գովերգողը, ֆրանսիական ուտոպիական սոցիալիզմի գաղափարներին հարողը, ամեն մի ճնշում և շահագործում դատապարտողը, կապիտալիզմը հակաբնական հասարակարգ որակողը երբեք չէր կարող հարել ոչ ազգային-պահպանողական և ոչ էլ լիբերալ-բուրժուական հոսանքին։ Այդ դեպքում ինչո՞վ բացատրել, որ ուսումնասիրողների ճնշող մեծամասնությունը Ստ. Պալասանյանին համարել են պահպանողական կամ լիբերալ։

Ստ. Պալասանյանի գործունեության և գրական ժառանգության գրեթե բոլոր ուսումնասիրողները որպես ծանրակշիռ փաստարկ վկայակոչում են այն հանգամանքը, որ իր գործունեության սկզբնական շրջանում՝ 1858—1861 թթ. նա գործակցել է Դ. Այվազովսկու հետ և հանդես է եկել «Հյուսիսափայլի» ու Մ. Նալբանդյանի դեմ։ Բայց, մեր կարծիքով, ճիշտ չէ Ստ. Պալասանյանի սկզբնական շրջանի գործունեությանը վերաբերող մասնակի փաստի հիման վրա բնորոշել նրա ամբողջ գործունեությունը, մանավանդ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Դ. Այվազովսկու գործունեությունն էլ մինչև վերջին ժամանակները ճիշտ չի բնորոշվել և ուսումնասիրողների մեծ մասի կողմից անարդար կերպով դիտվել է սոսկ որպես հետադիմական։

Մենք այն կարծիքին ենք, որ Ստ. Պալասանյանը հանդիսանում է դեմոկրատական հոսանքի խոշոր ներկայացուցիչներից մեկը, եղել է Մ. Նալբանդյանի հետևորդը։ Ստ. Պալասանյանի շահագրգռություններն ու մտահոգությունն աշխատավոր ժողովրդի անմխիթար վիճակի բարելավումն էր։ Ծառայել ժողովրդին, ուղիներ, միջոցներ գտնել նրա տնտեսական և հո-

34 Նույն տեղում։
35 Նույն տեղում, № 17։

գնող, ազատագրման համար՝ այս էր նրա հավատամքը։ Եվ պատահական չէ, որ Ստ. Պալասանյանը այս կամ այն գործչի գնահատմանը մոտենում էր այն տեսանկյունից, թե նա ինչ չափով է ծառայել հասարակ ժողովրդին։

Վաղ-նարոդնիկության գաղափարների ազդեցության տակ Ստ. Պալասանյանը հայ մտավորականությանը կոչ էր անում՝ գնալ գեպի ժողովուրդը, գործել ժողովրդի մեջ, ծառայել նրան։ Նա մատնացույց էր անում ռուս հեղափոխական-նարոդնիկ Ի. Յակուշեինի օրինակը, որը «գյուղացու հագուստ հագած՝ երկար ժամանակ շրջեցավ ժողովրդի մեջ» և «գյուղից գյուղ ու գիներից գիներաուն անցնելով՝ նա ժողովրդի ուրախություններին ուրախակից ու ցավերին ցավակից էր լինում...»[36]։

Առաջնորդելով բուրժուազիայի գաղափարախոսներին, որոնք գովերգում էին հայ բուրժուազիայի հարստացումը և նրա կապիտալները ներկայացնում իբրև համազգային հարստություն և ազգի վերածնության երաշխիք, Ստ. Պալասանյանը ասում էր. «Բայց բանն այն է. որ այս և այն քաղաքում հաստատվող հայերը չեն կազմում հայոց ազգությունը, այլ Հայաստանի հողի վրա բնակվող երկրագործ հայ ժողովուրդը. նորա ապահովության վրա պետք է խորհել, նորա ձեռքն պետք է բան ու գութան տալ, որ յուր հողը մշակե, և այնուհետև նա անշուշտ կը մտածե և յուր մասավոր անդաստանը մշակել»[37]։ Ինչպես տեսնում ենք, Մ. Նալբանդյանի օրինակով Ստ. Պալասանյանը հայ ազգ ասելով ամենից առաջ նկատի ուներ երկրագործ, աշխատավոր ժողովրդին։

Այսպիսով, Ստ. Պալասանյանը անցյալ դարի հիսունական թվականների վերջերից մտնելով գրական-հրապարակախոսական գործունեության ասպարեզ որպես պահպանողական հոսանքի պարագլուխներից մեկի՝ Գ. Այվազովսկու գործակից, վաթսունական թվականների սկզբից կտրուկ շրջադարձ է կատարել դեպի դեմոկրատիզմը, կրել ֆրանսիական ուտոպիական սոցիալիզմի, ռուսական վաղ-նարոդնիկության և հատկապես հայ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը և դարձել նրա հետևորդն ու դեմոկրատիզմի շարունակողը հայ իրականության մեջ։

ОБ ОЦЕНКЕ СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКИХ ВЗГЛЯДОВ СТ. ПАЛАСАНЯНА

ГЕВОРГ ХЕДОЯН

Резюме

Изучением литературного наследия Степана Паласаняна (1837-1889) занимались многие исследователи. Однако в оценке социально-политических взглядов Ст. Паласаняна они не были единодушны: одни характеризовали его как консерватора, другие — как буржуазного либерала. Детальное изучение деятельности Ст. Паласаняна показывает,

36 Նույն տեղում, 1876, № 2, էջ 339—340։

37 Նույն տեղում, 1877/78, № 1, էջ 155 (ընդգծումը մերն է —Գ. Խ.)։

что начиная с 1861 г. под идейным влиянием М. Налбандяна и французских социалистов-утопистов Ст. Паласанян становится на позиции демократизма. С этих позиций он подвергает резкой критике всякий социальный гнет и эксплуатацию. Нормальным, «естественным состоянием» общественной жизни Ст. Паласанян считает состояние равенства и взаимной помощи. Будущее справедливое общество он представляет себе в виде дружной большой семьи, где каждый работает «по мере своих способностей», но потребляет «наравне со всеми». Ст. Паласанян ратует за свободу, за социальную и национально-освободительную революцию.